## ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՄԱՐԶԱՀԱՆԴԷՍԸ

Մտքի և սրտի կրթութեան հետ մեր վարժարանը միշտ կարեւոր դատած է մարմնակրթանքը, որուն փայլուն արդիւնքը տեսանք Յունիս 2-ին մարզական քննութեան օրը:

Նախագահութեամբ Ուխտիս Ընդհ. Աբբային՝ Վարժարանին պարտէզին մէջ խռնուած էր բազմութիւն մը թէ՛ հայ գաղութէն և թէ՛ վարժարանին բարեկամներէն ու քաղաքական և եկեղեցական, պալատներու և ֆաշականութեան, ծովային և ցամաքային զինուորական իշխանութեանց, ընկերութեանց և վարժարաններու ներկայացուցիչներ, որոնց առջեւ մեր հայորդիները աշխոյժ, ճարպիկ, երագ շարժումներ, գնդակ, զանազան խաղեր, վազքեր և առկախ չուանի և ձողի վրայ վերելքներ կատարեցին՝ որ զարմանք ազդեց օտարներուն և մեզի մեծ բերկրանք:



Դժբախտաբար չենք կրնար մանրամասն նկարագրել, կը փափագինք սակայն գէթ քանի մը հրահանգներու մէջ յաջողագոյնները նշանակել:

Գնդաձգութեան մէջ (5 հազարակրամ ծանր) Հ. Տէվլէթեան 11,80 մեդր (երկայնութիւն) Մ. Մեհրանեան՝ 11,50, Գ. Ներսէսեան 11. — Խառն ցատքումի մէջ (2 մեդր հեռ. և 1,80 բարձր.) Գ. Ներսէսեան, Ժ. Եղիազարեան և Լուդուիկ Պալճեան. — Ձողով բարձրութիւն ցատքեցին՝ Մ. Մեհրանեան և Գր. Գալֆայեան 2,80 և Գ. Վէմեան՝ 2,70.

ՎԵՆԵՏԿՈՅ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՀԻՒՊԱՏՈՍԻՆ՝ Georges Gueyraud-ի յարգանքի և երախտագիտութեան ցոյց մ՚ըրաւ Ուխտս և Մ. Ռափայէլեան վարժարանը՝ քանի որ յետ հնգամեայ պաշտօնավարութեան ի մօտոյ կը փոխադրուէր ի Զակրէպ:



Աշակերտութեան երգերը, արտասանութիւններն և մաղթանքները ինչպէս և մեր հայրերուն և ուրիշներուն ողջերթի բաժակաճառերով ներբողեցին անոր ազնուութիւն և ըրած բարիքները հանդէպ Ուխտիս և Վարժարանին և հանդէպ այնքան հայ գաղթականներու որ ասկէ Ֆրանսա անցան:

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՓՈԽ-ԾՈՎԱԿԱԼ ՄՈՒԺԷ՝ հրամանատար Ֆրանս. զին. նաւային Ա. տորմիղին՝ որ Վենետիկ եկած էր, ընկերակցութեամբ իր օգնական բարձր հրամանատարներու և տեղւոյս Ֆրանս. հիւպատոսին՝ շուրջ մէկ ու կէս ժամ այցելեց մեր Մենաստանը, հետաքրքրութեամբ դիտելով հայկական մատենագրութեան և ծէսի թանկագին նշխարները որ կան մեր քով: Ազնիւ հիւրը մեկնելու պահուն իր խորին գոհունակութիւնն և շնորհակալութիւնն յայտնեց ըսելով. «Մեծապէս ուրախ եմ այցելած ըլլալուս լոյսի և պայծառութեան այս հայ վանքին»:

ԼԵՒՈՆ ԳԱՐԱԽԱՆ քաղաքական հայ ծանօթ դէմքն ալ որ բոլշեւիկ հանրապետութեանց դեսպանն է Էնկիւրիի մէջ՝ Յուլիս 14ին վանքս այցելեց իր ռուս տիկնոջ հետ շուրջ մէկ ու կէս ժամ: Մասնաւոր հետաքրքրութեամբ և գոհունակութեամբ դիտեց վանքիս մատենադարանը, տպարանը ևն, ողջունուած և հիւրասիրուած Ուխտիս բոլոր վանականներէն:

ԽՄԲ.

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

Խորհրդ. Հայաստանի Գրապալատի Վարչութենէն (Պետհրատ. Երեւան 1934)

Աբուլհասան Ա. — Վերելքում. (Ա. գիրք) թրգմ. Ա. Սոլախեան. էջ 274, 2ռ. 50կ.

Ալեքսանեան Բժ. Ա. Բ. — Շոգէ-ֆորմալինային դեզինֆէկցիոն կամերա (ապահովական տիպի) և Սակսէի շոգեկամերան, էջ 42, 50կ.

Ալահվերդեան Բժ. Լ. — Վարդանեան Վ. — Ամառային առողջապահական աշխատանքները պատանեկութեան մէջ. էջ 112, 1ռ.

Աղաջանեան Գ. — Կարապետեան Ս. — Բամբակի քաղհանի, կուլտիւացիայի ու նօսրացման միջոցով բարձրացնել դաշտերի բերքատուութիւնը. էջ 14, 10կ.

— Ընդհանուր երկրագործութիւն. էջ 368, 6ռ.

Աճեմեան Ջ. — Հայոց լեզուի դասագիրք. Ա. տարի. Այբբենարան. Բ. տպ. էջ 68. 75կ.

Անտիպով Ն. Կ. — Ֆիզկուլտուրայի խորհրդ. սիստեմի համար. էջ 54, 50կ.

Այփր խնկոյ. — Իմ դասը (1-ից 10-ը). գուն. պտկրգրդ. 75կ.

Բախանովսկայա Ե. — Քրիստափոր Կոլոմբոս. էջ 32, 50կ.

Բերեզանսկայա Ե. Ս. — Թուաբանական խնդիրների և վարժութիւնների ժողովածու. միջն. դպր. Ե. դսրնի. համար. բ. հր. թրգ. Մ. Խանջեան. էջ 198, 1ռ. 50կ.

Բերիա Լ. — Անդրկովկասի բոլշեւիկները սոցիալիզմի համար մղուող պայքարում. էջ 42, 50կ.

— Անդրկովկասեան ֆեդերացիան դարձնել խորհուրդների երկրի առաջաւոր հանրապետութիւն. էջ 15, 15կ.

— Բոլշեւիկօրէն կենսագործենք ՀԱՄ (բ) Կ. Անդրերկոմի երկրորդ պլենումի որոշումները. էջ 22, 35կ.

Բոգդանով-Կանտոր-Կորոլով. — Թուաբ. խնդրագիրք. գրագետ. դպրոցների համար. (թրգմ. Ա. Խանջեան) էջ 127, 1ռ. 20կ.

Բոլիրեզեան Լ. - Հովուի ուղեցոյց, էջ 44, 60կ.

Գալաչեան Բժ. Ս. (բրգ.) — Դաստիարակութեան գիգիենան նախադպրոցական հիմնարկներում, էջ 61, 50կ.

Գարստեան Բ. Պրոֆ. — Հողը և նրա նշանակութիւնը վազի համար. էջ 80, 1ռ. 20կ.

Գերշենզոն Մ. — Լենինի սարը. (թրգ. Աննա Քալանթար). էջ 28. 50կ.

Գոգոլ Ն. — Քիթը. թրգմ. Ա. Աթայեան. էջ 50, 40կ.

Գորկի Մ. — Խորհրդային գրականութեան մասին. էջ 189, 1ռ.

Դեմիդով (խմբ.). — Ֆիզիկայի խնդիրների ժողովածու. միջն. դպր. ուսման համար. էջ 252, 3ռ.

Դաբաղեան Ն. — Պլեխանովի էսթետիկական հայեացքների մասին. էջ 48, 40կ.

Դանիելեան Խ. — Քաղխորհուրդների անդամների իրաւունքների և պարտականութիւնների մասին. էջ 28.

Դուրգարեան Մ. (կազմեց). — Ընթերցարան. տարր. դպրոցների համար. Բ. դսրն. էջ 111, 1ռ. 40կ.

Եափուջեան Ար. (խմբ.). — Պայքար պտղաբանջարաբուծական տնտեսութիւնների բերքատուութեան բարձրացման համար. էջ 47, 50կ.

Եոլեան Ռ. Հ. — Ռազմա-դաշտային վիրաբուժութեան համառօտ ձեռնարկ, էջ 233, 2ռ. 50կ.

Զարեան Ն. — Սարոյ Միկինեան. ոտ. էջ 13, 15կ.

### ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Դուրեան Ե. Պատր. — Ազգային Պատմութիւն (Դուր. մատ. թ. 4). 1934, էջ 478, գինը 15 ֆր.

Սիւրմէնեան Արտաւազդ Արքեպս. — Պատմութիւն Հալէպի ազգային գերեզմանատանց և արձանագիր հայերէն տապանաքարերու. տպ. Ա. Տէր-Սահակեան, Հալէպ, 1935 (երկսիւն) էջ 52, գինը՝ 10 ֆր.

Մանուշ Ֆարիմի Գ. Յ. — Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը և գաղութահայութիւնը. տպ. «Սահակ-Մեսրոպ». Գահիրէ 1934, էջ 34. գինը՝ կէս շիլին.

Նժդեհ Գ. — Ամերիկահայութիւնը. ցեղը և իր տականքը. տպ. «Մասիս» Սոֆիա. 1935, էջ 116, գինը 8 ֆր.

Ռստանիկ. — Շահէնի խրճիթը. (ոտ.) տպ. «Մոդերն» Թէհրան, 1935, էջ 22, 2ռ. 50կ.

Զարդարեան Վահան. — Յիշատակարան. Գ. հատ. թ. 31-40. Հայ երեւելիներու կենսագր. լուսանկար-ձեռագիր ևն ևն.

Վեմեան Խ. Պ. — Մենիկ ծառը. տպագրութիւն Կ. Տօնիկեան. Պէյրութ. 1934. գինը 1,50 ֆր.

digitised by A.R.A.R.@

## ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԶԲՕՍԱԼԻ ԳՈՐԾԵՐ

## ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՕՏԱՐ ԸՆՏԻՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒ

# ԱՌԱԾ - ԱՌԱԿ - ԿԱՂԱՆԴՁԷՔ

Զուից. ֆր.

ԱՌԱԾՔ ազգային ժողովրդականք. աշխ. հաւաքածոյ: Հեղ. Հ. Սիմոն Ճուլարտեան: Տպ. 1880, էջ 183 — 60

ԱՌԱԾՔ (Հայկականք). Թարգմանեց գաղղիերէն հատընտիր. Հ. Գէորգ Պայեան: Տպ. Հայերէն–գաղղ. 1888, 1927, էջ 56 — 30

ԱՌԱԾՔ (Հայկականք). Թարգմանեց անգղիերէն, հատընտիր, Հ. Գ. Պայեան: Տպ. հայերէն–անգղ. 1888, 1909, 1932, էջ 60 — 30

ԱՌԱԾՔ Բարոյականք. գրաբ. Հեղ. Եպիկտետոս յոյն փիլիսոփայ: Թրգմ. Հ. Բառնաբաս Եսայեան: Տպ. 1871, էջ 218 1 —

ԱՌԱԿՔ ծաղկաքաղք և ինքնագիրք, և քերթուածք Հ. Քերոբէ Քուշներեանի: Մասն Ա և Բ Առակք, մասն Գ ոտանաւորներ, բանաստեղծութիւնք ուսու և գաղղիացի հեղինակներու. ապա աշխարհաբար Յարասութիւնք Սաղմոսաց Դաւթի: Տպ. 1904, էջ 639 4 —

ԱՌԱԿՔ ՍՈՂՈՄՈՆԻ կամ գիրք Առակաց: Տպ. 1734 — —

ԱՌԱԿՔ ԵՒ ՎԱՐՔ ԵԶՈՎԲՈՍԻ. աշխ. պատկերազարդ: Թրգմ. Հ. Մ. Բժշկեան: Տպ. 1818, 1860, 1886, 1931, էջ 431 2 —

ԱՌԱԿՔ. Հեղ. Փեդրոս հռովմայեցի. գրաբար ոտանաւոր: Թրգմ. Գերպ. Եդուարդ Հիւրմիւզեան: Տպ. 155, էջ 108 2 —

ԱՌԱԿՔ Մխիթար Գօշի և Նասրէտտին–Խոճայի. ընտիր առակները վերածուած ոտանաւորի. գրաբար: Հեղ. Վրոյր Որմզդան (Գերպ. Եդ. Հիւրմիւզեան): Տպ. 1865, էջ 152 0 60

ԱՌԱԿՔ Մրգաստանի. Ծաղկաքաղ զանազան հեղինակներէ: Թրգմ. Հ. Գ. Այվազովսքի, Գերպ. Գ. Հիւրմիւզեան, Հ. Գ. Նազարէթեան, Հ. Ա. Տիրոյեան, եւն.: Պատկերազարդ: Հրատ. Հ. Ա. Տիրոյեան: Տպ. 1882, 1893, էջ 94 0 50

ԱՌԱԿՔ Կաղանդչէք. աշխարհաբար: Հեղ. և Թրգմ. Հ. Քերոբէ Քուշներեան.
Ա. հտր.: Տպ. 1876, 1882, էջ 107 — —
Բ. հտր.: Տպ. 1886, 1894, էջ 146 0 60

ՏԱՃԿԱԿԱՆ ԱՌԱԿՔ. հաւաքեց Հ. Ս. Ճուլարտեան: Տպ. 1882, էջ 190 — 60

ՎՐՈՅՐԻ ՈՐՄԶԴԱՆԱՅ առակացն գիրք: Մ. Գօշի. Եզովբոսի. և Նասրէտտին–Խոճայի ընտիր առակներէն ոտանաւորի վերածուած գրքը. Գերպ. Եդուարդ Հիւրմիւզ: Տպ. 1865 էջ 152 0 60

# ԴԱՍՏԻԱՐԱԿԱԿԱՆ ԳՐՔԵՐ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՂՋԿԱՆՑ. աշխ.: Հեղ. Ֆենելոն: Թրգմ. Հ. Ամբրոսիոս Գալֆայեան: Տպ. 1850, էջ 334 2 —

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՂՋԿԱՆՑ. աշխ. Խրատք որ Լամպէռ մարքիզուհւոյ առ դուստրն իւր: Ֆրանս. Թրգմ. Գրիգոր Ոսկեան. ընդհ. քննիչ հանրային կրթութեան: Տպ. 1931, էջ 99 1 60

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՆՁԻՆ. աշխ. ընտիր գործ երեք մասերէ բաղկացած, բարոյական, իմացական և ֆիզիքական: Հեղ. Ճոն Սդուարդ Պլէք: Թրգմ. Հ. Արսէն Ղազիկեան: Տպ. 1902, էջ 132 — 60

ԴՊՐՈՒԹԻՒՆ ՆԱՄԱԿԱՑ. գրաբ. կը խօսի նամակներ գրելու կերպին և պատշաճութեանց վրայ, գրաբար և աշխարհաբար օրինակներով: Հեղ. Հ. Եղիա Թովմաճեան: Տպ. 1805, էջ 408 — —

ՄԱՅՐ, Առաջին դաստիարակ մանկութեան. աշխ. մօր մը պարտքերը իր փոքրիկ զաւակները լաւ մեծցնելու համար: Թրգմ. Հ. Գարեգին Զարբհանալեան: Տպ. 1874, էջ 484 1 25

Զուից. ֆր.

ՄԱՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ (Նոր). աշխ. կը սորվեցնէ մարդկային կենցաղագիտութեան պատշաճողութիւնները: Հեղ. Հ. Ռափայէլ Թրեանց: Տպ. 1856, 1885, էջ 155: Տես նաեւ Քաղաքավարութիւն — 75

ՆԿԱՐԱԳԻՐ առաքինութեան: Հեղ. Ֆենելոն: Տպ. հայ.-գաղղ.: Տպ. 1837 — 10

ՆԿԱՐԱԳԻՐՔ. գրաբ. համառօտ և գեղեցիկ նկարագրութիւն ախտաւոր բնաւորութիւն ունեցողներու: Հեղ. Թէոփրաստ, յոյն իմաստասէր: Թրգմ. Հ. Արսէն Կ. Բագրատունի: Տպ. 1830, 1901, էջ 111 1 —

ԱՐՈՒԵՍՏ ուղիղ խորհելոյ և բարւոք կելոյ: Խմբգր. Հ. Ա. Կ. Բագրատունի: Տպ. 1857, էջ 318 2 —

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵՆԱՑ. գրաբ. չինական լեզուէ թարգմանուած բարոյական խրատներ: Թրգմ. անգղիերէնէ Գէորգ Աւետ. Զաքարեան Ջուղայեցի (ի Պաթաւիոյ): Տպ. 1845, 1866, էջ 96 — 50

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ. գրաբ. մարդկային կենաց օգտակար կանոններ: Գործին վերջը կայ համառօտութիւն մը աշխարհաբար՝ տղայոց համար: Հեղ. Գերպ. Իգնատիոս Փափազեան: Տպ. 1806, էջ 171 1 -

# ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

ԲԱՄ ՓՈՐՈՏԱՆ. Զուերգ բանակին Վահանայ Մամիկոնենի. գրաբ. ոտանաւոր. Հ. Ղեւոնդ Մ. Ալիշանի հրատ. եւրոպական խազերով: Տպ. 1898, 1914 — 50

ԵԿԱՅՔ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՔ. նմոյշ մը Հայ եկեղեցւոյ սրբազան երաժշտութեան. եւրոպական խազերու վերածեց, հայերէն և ֆրանսերէն մանրագիտական ուսումնասիրութեամբ հրատարակեց Հ. Ղեւոնդ Տայեան: Տպ. 1933, էջ 28 3 —

ԵՐԳՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ յերիւրեալք ըստ եւրոպական երաժշտութեան. քառալեզուեան հրատարակութիւն (հայ. – անգղ. – գաղղ. – իտալ) հայ եկեղեցւոյ երգերուն եւրոպական խազերով (նօթա): Վերածող եւրոպական խազերու՝ Փիէթրօ Պիանքինի, իտալացի երաժշտապետ: Հրատ. Մխիթ. Հարք: Տպ. 1876, էջ 226 7 50

ԽՄԲԵՐԳՆԵՐ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ. կը բովանդակէ Ս. Աստուած. – Սուրբ, Սուրբ. – Հայր երկնաւոր – Յամենայնի. – Որդի Աստուծոյ. – Հոգի Աստուծոյ. – Քրիստոս պատարագեալ. Արտատպուած «Երգ Հայաստանեայց Եկեղեցւոյ» գրքէն: Հեղ. Պիանքինի: Տպ. 1876, էջ 28 1 50

ՇԱՐԱԿԱՆ ԱՏԵՆԻ. Ձայնքաղ. գրաբ. շարականք որ կ'երգուին հասարակաց ժամասացութեան մէջ. գեղեցիկ և մեծադիր. բազդատութեամբ ընտիր, հնագոյն և հարազատ գրչագրաց. խազերու ձեւը, չափը և քանակը՝ ձուլուած են յար և նման գրչագիրներու: Հրատ. Գերպ. Իգնատիոս Կիւրեղեան: Տպ. 1907, էջ 652 35 —

ՇԱՐԱԿԱՆՔ ԵՒ ԵՐԳՔ ի պատիւ Ս. Աստուածածնի. հայ–լատ. Շարակնոցի և Ժամագրքի մէջ գտնուած Ս. Աստուածածնի վրայ գրուած երգեր ու շարականներ, թարգմանուած լատիներէն լեզուով և հայ բնագրին հետ տպագրուած: Թրգմ. և հրատ. Հ. Աթանաս Տիրոյեան: Տպ. 1877, էջ 119 1 25

ՍԿԶԲՈՒՆՔ ՁԱՅՆԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ. աշխ. դասագիրք եւրոպական երաժշտութեան խազերու (նօթաներու): Հեղ. Հ. Մինաս Նուրիխան: Տպ. 1882, էջ 67 — 75

ՍԵՒԱՆ. Հայ Նորագոյն կոմպոզիտորներ. ուսումնասիրութիւն՝ ի դարու Հայ. Երաժշտութեան պատմութեան, նշանաւոր դէմքերու, պատկերազարդ և երգերու նմոյշներով: Խմբ. Արամ Երեմեան: Տպ. 1926, էջ 108+48 5 —

digitised by